



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԼՈՒԿԱՇԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2016-2021թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2016 – 2021թթ.

Կազմեց համայնքի ղեկավարը՝

Կարեն Մկրտչյանը

Քննարկվել և հաստատվել է Լուկաշին համայնքի

Ավագանու 2016 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1 անդրանիկ նիստի թիվ 4-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն ..... 3-4

2.Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում 5-15

3.Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական  
նպատակների սահմանում ..... 16- 17

4.Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային,  
միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում  
..... 18

5.Համայնքի ֆինանսական իրավիճակը ..... 19-24

6.Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում,  
ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական  
միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում  
..... 25- 37

7.Եզրափակում ..... 38-39

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի 2016-2021թթ. Չարգացման հնգամյա ծրագիրը (ՀԶՄ) մշակվել է՝ հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում) ՀԶՄ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀԶՄ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- Համայնքի բնակչության թվաքանակը.
- Համայնքում առկա ենթակառուցվածքը և մատուցվող ծառայությունները.
- Համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Ելնելով այն իրողությունից, որ համայնքը փոքր է իր ֆինանսական կարողություններով, համայնքի ՏԻՄ-երն ի վիճակի չեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորություններն ամբողջ ծավալով և բոլոր ոլորտներում: Այդ պատճառով սույն ՀԶՄ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՄ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2016-2021թթ. ՀԶՄ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի վերընտրված ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՄ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ՀԶՄ-ի փաստաթուղթը մշակելիս հատուկ ուշադրություն են դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՄ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶՄ-ի 1-ին բաժնում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶՄ-ի մշակման չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը,

դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա կազմվել է համայնքում հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բա-նում ներառվել է նաև համայնքի ՈւԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

*ՀԶԾ-ի 2-րդ բաժնում* սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶԾ-ի հիմնական նպատակները:

*ՀԶԾ-ի 3-րդ բաժնում* ներկայացվում են պետության, միջազգային և տեղական դոնոր, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, գործողությունները և միջոցառումները:

*ՀԶԾ-ի 4-րդ բաժնում* ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

*ՀԶԾ-ի 5-րդ բաժնում* ներկայացվում է համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

*ՀԶԾ-ի 6-րդ բաժնում* ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հնգամյա ծրագիրն՝ ըստ տարիների:

*ՀԶԾ-ի եզրափակումում* ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶԾ-ի իրականացման, մշտադիտարկման (մոնիթորինգի), վերահսկման և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման, ՀԶԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

1. ՀԱՄԱՅՄՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ

Լուկաշին համայնքը հնագույն բնակավայր է, որը գտնվում է Արմավիրի մարզում: Հեռավորությունը մայրաքաղաքից 50 կմ է, իսկ մարզկենտրոնից հինգ կիլոմետր դեպի ձախ արևմուտք: Համայնքի բարձրությունը ծովի մակարդակից 900մ է: Գյուղի բնակչությունը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության Ախուրյանի, Ապարանի, Գորիսի, Թալինի շրջաններից, ապա Լիբանանից, Սիրիայից, Իրանից: Համայնքը ունեցել է մի քանի անուններ՝ Լուկաշեն, Կարմիր բանակային, Նալբանդյան, ՈՅ Սովխոզ: Համայնքը, հիմնադրվել է 1922 թվականին: Համայնքը սահմանակից է Նորավան և Խանջյան համայնքներին: Համայնքի տարածքով գետ չի հոսում: Կլիման խիստ է, ամառը՝ շոգ և տոթ, ձմեռը՝ ցուրտ ու չոր: Առանձին տարիներին նկատվում են կիզիչ շոգեր, երբեմն երաշտ՝ իր վնասակար ազդեցություններով: Ձմռանը ճանապարհները չեն փակվում, քանի որ համայնքը սահմանակից է մարզկենտրոն Արմավիր քաղաքին, կապը չի ընդհատվում: Հաճախակի են չորային ամառները, գարնանային վարար անձրևները, որոնց հետևանքով մեծանում են սողանքները և սելավները, ձմռան ցուրտը և այլն: Գյուղի վարչական տարածքը կազմում է 1060 հա:

Գյուղի միջնակարգ դպրոցն ու գլխավոր փողոցը կրում են Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի անունը, այստեղ են ապրում նաև նրա ժառանգները:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 2613 մարդ, այդ թվում տղամարդ՝ 1327 և կանայք՝ 1286: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան - 156 մարդ
- 7-17 տարեկան - 580 մարդ
- 18-62 տարեկան - 1510 մարդ
- 63- և ավելի տարեկան – 367 մարդ
- Կենսաթոշակառուների թիվը – 277
- Հաշմանդամներ - 14 մարդ, այդ թվում մանկուց հաշմանդամներ՝ 3 մարդ
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 23 մարդ
- Աշխատունակներ - 1910 մարդ
- Զբաղվածներ – 1770 մարդ, այդ թվում գյուղատնտեսությամբ՝ 1170 մարդ
- Տնային տնտեսությունների թիվը- 770
- Ընտանիքների թիվը - 732

- Ընտանեկան նպաստի պետական համակարգում հաշվառված ընտանիքների թիվը - 74 , այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը` 74:

### 1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2016 թվականի սեպտեմբերի 18-ին երկրորդ անգամ համայնքի ղեկավար է վերընտրվել Կարեն Սարգիսի Մկրտչյանը: Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Լուկաշին համայնքի ղեկավարը, համայնքի ավագանին իր 7 անդամներով նպատակասլաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները: Անհարժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթել պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:

Համայնքապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

Համայնքի ղեկավար	- 1 միավոր, 244000դրամ
Ղեկավարի տեղակալ	- 1 միավոր, 157500դրամ
Ղեկավարի օգնական	- 1 միավոր, 143000դրամ
Աշխատակազմի քարտուղար	- 1 միավոր, 133000դրամ
Առաջատար մասնագետ	- 2 միավոր, 130500դրամ
Առաջին կարգի մասնագետ	- 1 միավոր, 105000դրամ
Գործավար	- 1 միավոր, 85500դրամ
Վարորդ	- 1 միավոր, 93000դրամ
Հավաքարար	- 1 միավոր, 80000դրամ
Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը` 8 մարդ`	1078500դրամ
Գրադարանի վարիչ	- 1 միավոր, 80000դրամ
Այգեպան	- 1 միավոր, 80000դրամ

Համայնքում գործում է <<ԼՈՒԿԱՇԻՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ), որի աշխատակազմը բաղկացած է 11 աշխատակցից: Դրանց հաստիքացուցակը և աշխատավարձերի պաշտոնային դրույքաչափերն են`

- տնօրեն	1 միավոր, 93000դրամ
- հաշվապահ	0,5 միավոր, 36375դրամ
- դաստիարակ	2,24 միավոր, 207424դրամ
- դաստիարակի օգնական	2 միավոր, 145502դրամ
- խոհարար	1 միավոր, 72751դրամ

- խոհարարի օգնական 0,5 միավոր, 36375դրամ
- դաշնակահար 0,56 միավոր, 51855դրամ
- Օժանդակ բանվոր 0,5 միավոր, 36375դրամ
- տնտեսվար 0,5 միավոր, 36375դրամ:

Լուկաշին համայնքում գործում է նաև պարի խմբակ:

#### 1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ: Ներկայում համայնքի սեփականություն համարվող գույքն ունի հետևյալ ցանկն ու վիճակը (աղյուսակ 1)

- <<Լուկաշինի մանկապարտեզ>>
- Համայնքապետարանի շենք
- Մշակույթի տուն (գրադարան)
- Բուժամբույատորիայի շենք
- Ներհամայնքային նշանակության փողոցներ և ճանապարհներ, որոնք ունեն բարակարգման և/կամ ասֆալտապատման կարիք,
- Գերեզմանատուն՝ 1 հատ, որը ունի ցանկապատման կարիք,
- Համայնքի սեփականություն հանդիսացող բնակարաններ
- Հանրակացարան

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույցը	Հասցեն	Կառուց ապատման Տարեթիվը	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատականը	Նորոգման /վերանորոգման/ փոխարինման կարիքը	Այլ Նշումներ
1.	Մանկապարտեզ	գ.Լուկաշին	19--		Վատ	Նորոգման	
2.	Խմելու և ոռոգման ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ	գ.Լուկաշին	2014		Լավ	Ընթացիկ նորոգման	
3.	Ներհամայնքային նշանակության ճանապարհներ	գ.Լուկաշին	-		Բավարար	ասֆալտապատման	
4.	Ներհամայնքային փողոցներ	գ.Լուկաշին	-		Վատ	ասֆալտապատման	
5.	գերեզմանատուն	գ.Լուկաշին	-	1 հատ.	Բավարար	ցանկապատման	

6.	Համայնքի սեփականություն Հանդիսացող բնակարաններ	գ.Լուկաշին	19--	5 հատ	Վատ	Նորոգման	
7.	Հանրակացարան	գ.Լուկաշին	19--	2 հատ	Վատ	նորոգման	

**1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ**

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքում կա արտադրական 4 միավոր՝

1. Սառնարան
2. Ալրադաց
3. Գինու գործարան
4. Կաթի արտադրամաս
- 5.

**1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր (գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն):

Համայնքը ապահովված է մշտական խմելու ջրով: Խմելու ջրով ապահովված են նաև համայնքի դպրոցը, մանկապարտեզը:

Համայնքի մի մասը ապահովված է ոռոգման ջրով: Ջրատարը ամեն տարի վերանորոգվում է համայնքի բյուջեի հաշվին: Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի):

Համայնքի 90% գազաֆիկացված է:

Համայնքում աղբահանությունն իրականացվում է շաբաթը մեկ անգամ, համայնքի միջոցներով: Համայնքն ունի աղբատար մեքենա, որն իր դրական ազդեցությունն է թողնում համայնքի մաքրության, բնության պահպանության վրա:

Համայնքում կա 1 գերեզմանատուն, որը ցանկապատված չէ, ինչի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում այդ գերեզմանատան տարածքը՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

-----



## 1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կան բազմաբնակարան բնակելի շենքեր 106 բնակարան՝ 7202մ<sup>2</sup> մակերեսով, բնակելի առանձնատներ 295 հատ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 35640մ<sup>2</sup>: Առանձնատների մեծ մասը վերանորոգման կարիք ունի, իսկ նորոգածան ընտանիքների համար անհրաժեշտ են նոր առանձնատներ: Սակայն, բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով առանձնատների վերանորոգման աշխատանքներ կատարվում են միայն խիստ անհրաժեշտության դեպքերում, իսկ նոր առանձնատներ համարյա չեն կառուցվում:

## 1.8 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է - 1060 հա, այդ թվում

- գյուղատնտեսական նշանակության հողեր - 789,4հա,
- արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր – 14,0հա,
- ջրային ֆոնդի հողեր – 8,71 հա,
- ընդերօգտագործման հողեր – 0,29 հա,
- ճանապարհների տակ հողեր – 17,9 հա,
- բնապահպանական նշանակության հողեր – 0 հա,
- այլ նշանակության հողեր - 0 հա:

1991թ. հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհմանը մասնակցել են համայնքի տնային տնտեսությունների գրեթե բոլոր ընտանիքները: Համայնքի սեփականաշնորհման հողերի մեկ հողաբաժնի չափը կազմել է 0,52 հա, այ թվում 0,40 հա-ը վարելահող (տնամերձի հետ միասին):

Համայնքի սեփականություն համարվող հողերը կազմում են 813հա :

## 1.9 ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն դրա զարգացման համար համայնքում արոտավայրեր չկան, այդ պատճառով համայնքի բնակչությունը ստիպված է լինում անասուններին տեղափոխել Ամասիայի տարածաշրջանի արոտավայրեր:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 1336 գլուխ, այդ թվում կով՝ 335 գլուխ, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ 2895 գլուխ: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև որոշ քանակության թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար: Համայնքի մի քանի տնային տնտեսություններ հաջողությամբ զբաղվում են նաև մեղվապահությամբ, առկա է 1300 մեղվաբնտանիք:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Համայնքի բնակիչներն իրենց տնամերձերում և սեփականաշնորհված վարելահողերում աճեցնում և մշակում են կարտոֆիլ, հացահատիկային և բանջարաբուստանային կուլտուրաներ՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման և վաճառքի համար: Բնակիչներն ունեն նաև սեփականաշնորհված խաղողի և պտուղի տարածքներ:

Համայնքի բնակիչներն ունեն խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

#### 1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնության պահպանությունն իրականացվում է Լուկաշինի համայնքապետարանի կողմից:

#### 1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ներհամայնքային փողոցներ և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 15կմ: Ներհամայնքային ճանապարհների վիճակը անբավարար է, որի վերանորոգումը կատարվում է համայնքի կողմից՝ կատարելով հիմնականում հողային և խճապատման աշխատանքներ, իսկ 5 կմ ասֆալտապատ ճանապարհը դեպի մարզկենտրոն տանող, լուրջ վերանորոգման և բարեկարգման կարիք ունի: Ներհամայնքային գլխավոր փողոցները չունեն ջրահեռացման հեղեղատներ, արտաքին (գիշերային) լուսավորության համակարգը գործում է (կենտրոնական փողոցներով):

Համայնքից մինչև մոտակա շուկա (քաղաք Արմավիր) ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 5 կմ է: Ներկայում համայնքի բնակչությունը հիմնականում օգտվում է Արմավիր քաղաքի շուկայից՝ չնայած տրանսպորտային առկա դժվարությունների:

Համայնքում շահագործվում է մոտ 268 թեթև մարդատար և 68 բեռնատար ավտոմեքենա, 1 մասնավոր ավտոբուս: Համայնքում կա նաև մասնավոր 20 անիվավոր տրակտոր:

Համայնքից մարզկենտրոն գնացող ճանապարհին կա մեկ կամուրջ, որը կառուցվել է 1957թ. և չի վերանորոգվել, գտնվում է խիստ անբավարար վիճակում:

#### 1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածում գործում է առևտրի 5 կետ, որոնք զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմիննում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին՝ գործունեության թույլտվության համար: Առևտրի 5 կետերը տեղակայված են քարե շինություններում:

Համայնքում չկա կենցաղսպասարկման և ծառայությունների ոչ մի օբյեկտ:

#### 1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգը ներառում է 1 միջնակարգ դպրոց և 1 մանկապարտեզ:

Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է Լուկաշինի միջնակարգ դպրոցում: Դպրոցը կառուցվել է 1968թ-ին, 2012թ-ին կապիտալ վերենորոգվել է դպրոցի մի մասը: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, 1 ուսուցչին ընկնում է մոտ 7 աշակերտ, աշակերտների թիվը կազմում է 277, իսկ աշխատողներինը՝ 42 , որից ուսուցիչ՝ 38: Համայնքից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազում է: Դպրոցը զագաֆիկացված է, ջեռուցումը կատարվում է լոկալ, ունի մշտական խմելու ջուր և լոկալ կոյուղի:

Դպրոցի մի մասը վերջին տարիների ընթացքում հիմնանորոգվել է: Դպրոցը ունի ֆուտբոլի դաշտ, բարվոք վիճակում: Սովորողների թվաքանակը ստաբիլ է: Մակայն քանի որ համայնքը քաղաքին կից է, նկատվում է դպրոցականների արտահոսք Արմավիր քաղաքի ավագ դպրոցներ: Շրջանավարտները ուսումը շարունակում են քաղաք Արմավիրի և հիմնականում քաղաք Երևանի այլ բուհերում ու կրթօջախներում:

Համայնքն ունի մանկապարտեզ ՀՈԱԿ, որը կառուցվել է 1953թ-ին, գտնվում է ոչ բարվոք վիճակում: Մանկապարտեզը զագաֆիկացված չէ, ունի մշտական խմելու ջուր : 2015թ-ին մանկապարտեզի խոհանոցը վերանորոգվել է պետական բյուջեից՝ կապիտալ ներդրումների հաշվին: Մանկապարտեզը գործում է 2 խմբով, հաճախում են թվով 50 երեխա, աշխատողների թիվը կազմում է՝ 11, որից 4 դաստիարակ: Մանկապարտեզի շենքում չկա առանձին

ճաշասենյակ: Մանկապարտեզի շենքի բակում կա ավագային համապատասխան խաղամիջոցների հրապարակ:

Համայնքի ավագանու որոշմամբ, մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճարը կազմում է 5000 դրամ: Մանկապարտեզի պահպանման մնացած ծախսերը սուբսիդավորվում է համայնքի բյուջեից:

#### 1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի մշակույթի շենքը կառուցվել է 1967թ-ին, սակայն չի գործում, ոչ բարվոք վիճակի պատճառով, որն էլ իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:

Մշակույթի տանը գործում է գրադարան, որն համալրված է հարուստ գրականությամբ, ունենք շատ ընթերցողներ:

Ներկայումս մշակութային կյանքը համայնքում անբավարար վիճակում է:

#### 1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է բուժամբուլատորիա, որտեղ աշխատում է երկու բուժբույր և մեկ բժիշկ: Շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է խմելու ջրի ջրամատակարարմամբ, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Ստացիոնար բուժման կառույց չկա: Բուժ. Կետը գործում է հնգօրյա աշխատաժամանակով:

#### 1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի տարածքում կան խաղահրապարակներ: Մանկապարտեզի բակի խաղահրապարակը խճապատ է, տեղադրված են խաղային սարքավորումներ և ճոճանակներ, հրապարակը ցանկապատված է:

Համայնքի միջնակարգ դպրոցի բակում կա ֆուտբոլի դաշտ, որից բացի դպրոցի աշակերտները, օգտվում են նաև համայնքի երիտասարդները:

2015 թվականին կառուցվել է նա մեկ խաղահրապարակ-զբոսայգի, համայնքի Հ. Ավետիսյանի անվան հուշարձանի տարածքում, որտեղ տեղադրվել են ճոճանակներ, աթոռներ, որոնք կրում են Լուկաշին անվանումը, աղբամաններ, Ամենափրկիչ խաչը: Հրապարակն ամբողջությամբ սալիկապատվել է, մեծ մակերես են գրավում գույնզգույն վարդերը:

Համայնքի միջնակարգ դպրոցի բակում կա ֆուտբոլի դաշտ, որտեղ բացի դպրոցի աշակերտներից, օգտվում են նաև համայնքի երիտասարդները:

#### 1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 1910 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 1770-ը, մնացած 140-ն աշխատանք չունեն:

Համայնքի մոտ 732 ընտանիքներից 74-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 74 ընտանիքները: Համայնքում բնակվում են նաև մոտ 14 հաշմանդամ և միակողմանի ծնողազուրկ 23 երեխա:

Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալ-ատոլոգապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին շոշոփելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Արմավիրի տարածաշրջանային ՄՕՏԳ-ի (պետական պատվերի շրջանակներում), համայնքապետարանի կողմից:

#### 1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Հատկապես վերջին 3-4 տարիների ընթացքում նկատվել է որոշակի դրական տեղաշարժ համայնքի ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում, ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Մյուս կողմից, համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հասարակական հանրօգուտ աշխատանքներին, հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքի համայնքապետարանում տարեկան 1-2 անգամ կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը (համայնքի ղեկավարը և ավագանու անդամները) և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

#### 1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը մինչև վերջերս տարերային բնույթ է կրել, ներկայում այն սաղմնային վիճակում է: 2013 թվականին համայնքում, ավագանու որոշմամբ, ստեղծվել է աղետների դեպքում բնակչության

տարահանման հանձնաժողովը, հաստատվել է բնակչության տարահանման գործողությունների պլանը:

Չնայած համայնքի ՏԻՄ-երի շահագրգռվածությանը և պատրաստակամությանը, նրանք առայժմ չունեն այլ համագործակցություն աղետների ռիսկի նվազեցման ոլորտում գործող մարզային համապատասխան մարմինների հետ: Դա է պատճառը, որ համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ:

2016 թվականին համայնքում տեղադրվեցին երկու հակակարկտային կայաններ:

## 1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող արտադրական և առևտրի 5 մանր կետերի գործունեությամբ, որոնց հետ ՏԻՄ-երը մշտապես պաշտպանում են լավ ու բարյացակամ հարաբերություններ: Սակայն, դրանով հանդերձ, մինևույն է, համայնքում բիզնեսի զարգացման վիճակն առանջնապես բարվոք համարել չի կարելի:

Ամփոփելով համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են հավելված 1-ում: Այդ ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ֆինանսական ցուցանիշներ:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայում առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

1. Համայնքը չունի հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր,
2. Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի),
3. Ներհամայնքային ճանապարհները և փողոցներն անբարեկարգ վիճակում են:
4. Համայնքը չունի գյուղատնտեսական հողերի ոռոգման համակարգ, որի պատճառով տնամերձ հողերը բացարձակ չեն մշակվում:
5. Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում:
6. Համայնքի գերեզմանոցը ցանկապատված չէ:
7. Համայնքից տարեց տարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում համայնքի դպրոցի աշակերտների, մանկապարտեզի սաների թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:
8. Համայնքի աշխատունակ բնակչության մոտ ¼-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի որոշակի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք:
9. Համայնքը չունի եկեղեցի, որի դերը կարևորում է համայնքի բնակիչը:

10. Համայնքի լողավազանը ենթակա է վերանորոգման, որը առողջ ապրելակերպ կապահովի բնակչին:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2016-2021թթ. ՀԶՇ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանված հիմնական նպատակներից:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՅՎ – ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

##### ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Արմավիրին)
- Համայնքի համեմատաբար կլիման, բնությունը
- Համայնքում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործելը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Համայնքը ապահովված է խմելու ջրով և բնական գազով
- Ոռոգման ջրի ջրատար

##### ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՑԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը համայնքի բոլոր փողոցներում
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը հանրակացարանում
- Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- Համայնքում աշխատողների խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Համայնքի գերեզմանատան չցանկապատված լինելը:

##### ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավարտապես՝ մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությանը:
- Զբաղվածության ցածր մակարդակը, գործազրկություն:
- Բնակչության 63% սոցիալապես անապահով են, 10% ծայրահեղ աղքատներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,
- տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում և ասֆալտապատում, գիշերային լուսավորության համակարգի լիովին անցկացում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության աստիճանի հետևողական բարձրացում:
- սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի իրականացում, համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի, ելակետային քարտեզի, սեյսմաշրջանցման քարտեզի ստեղծում:

Հանայնքի զարգացման 2016-2021թթ. Հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման, մասնակցության կարգի մշակման և ընդունման, մասնակցության մեթոդների և ձևերի աստիճանական զարգացման միջոցով,



- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների ասֆալտապատում և լիովին լուսավորում:

3 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ)  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2016-2021թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- Արմավիր-Լուկաշին ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում,
- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական պատվերի շրջանակներում,
- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Աղյուսակ 2. Համայնքի 2015-2016թթ. Բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2016թ. փաստ	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ(1+2+3)	48441,4	51914,5	51986,9	52103.5	52171.0	52410.0	52520.0	52640.0
1	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)	48441,4	51914,5	51986.9	52103.5	52171.0	52410.0	52520.0	52640.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	13947,7	14906,8	14971.0	15650.0	15671.0	15810.0	15820.0	15830.0
	Գույքային հարկեր անշարժ գույքից	13947,7	14906.8	14971.0	15650.0	15671.0	15810.0	15820.0	15830.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1,0	50,0	1.0	50.0	20.0	50.0	50.0	50.0
	Հողի հարկ	9671,9	9700,0	9800.0	10350.0	10320.0	10360.0	10360.0	10360.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	4104,8	4906,8	5000.0	5000.0	5100.0	5150.0	5160.0	5170.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4104,8	4906,8	5000.0	5000.0	5100.0	5150.0	5160.0	5170.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	170,0	250,0	170.0	250.0	250.0	250.0	250.0	250.0
	Տեղական տուրքեր	170,0	250,0	170.0	250.0	250.0	250.0	250.0	250.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր Պետական տուրքեր								
1.5	Այլ հարկային եկամուտներ								
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ								
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ								
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	33269,8	35783,9	35783.9	35703.5	35780.0	35800.0	35850.0	35900.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ								

2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ								
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	33269,8	35703,5	35703.5	35703.5	35780.0	35800.0	35850.0	35900.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	33269,8	35703,5	35703.5	35703.5	35780.0	35800.0	35850.0	35900.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ այլ		80,4	80.4					
գ)	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)								
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման մակարդակներից այլ	4000,0							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)								
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ								
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1223,8	593,0	793.0	600.0	600.0	650.0	650.0	650.0
3.1	Տոկոսներ								
3.2	Շահաբաժիններ								
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	246,3	593,0	793.0	600.0	600.0	650.0	650.0	650.0

	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	246,3	593,0	793.0	600.0	600.0	650.0	650.0	650.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ								
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ								
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր								
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում								
	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		210,0	210.0					
3.5	Վարչական գանձումներ								
	Տեղական վճարներ								
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ								
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	977,5	230,0	230.0	150.0	100.0	150.0	250.0	260.0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից								

	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ								
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող զծով տույժերից								
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ								
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ								
3.9	Այլ եկամուտներ								
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր								
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	619,3	1089,4	239.4	1500.0	1500.0	1600.0	1600.0	1600.0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ								
2.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)								
	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
2.	ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ՉԱՐՏԱՂԻՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ								

	ՄՈՒՏՔԵՐ								
	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ								
	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՒ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)								
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ(1+2)								
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ								
1.1	Արժեթղթեր								
	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	- հիմնական գումարի մարում								
1.2	Վարկեր								
	- վարկերի ստացում								
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	Փոխատվություններ								
	- բյուջետային փոխատվությունների ստացում								
	- ստացված փոխատվությունների գումարի մարում								
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	1330,4	305,6						
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն								
	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր								
	- իրավ. անձ. կանոնադր. կապիտալում պետ. մասնակց, պետ. սեփակ. հանդիսացող անշարժ գույքի (բացառ. հողերի), այդ թվում՝ անավարտ շինարար. օբյեկտների մասնավորեցումից առաջաց. միջոց-ից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր								
	- բաժնետոմսեր և կապիտալում այլ								

	մասնակցություն ձեռքբերում								
2.2	Փոխատվություններ								
	- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր								
	- փոխատվությունների տրամադրում								
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	1274,8	305,6						
2.4	. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս	55,6							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս								
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը								
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ								
1.	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ								
1.1	Արժեթղթեր								
	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր								
	- հիմնական գումարի մարում								
1.2	Վարկեր								
	- վարկերի ստացում								
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում								
1.3	Փոխատվություններ								
	- փոխատվությունների ստացում								
	- ստացված փոխատվությունների գումարի մարում								



**ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՍՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՑԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ**

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում նեկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական, Լուկաշին համայնքի ավագանու կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 3)՝ ընդգրկելու համայնքի 2016-21թթ. ՀԶԾ-ում

**Աղյուսակ 3. 2016-21թթ. ՀԶԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը**

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	19500.0(տարեկան)
2.	Համայնքի մանկապարտեզի պահպանում	4400.0(տարեկան)
3.	Աղբահանության ծառայության մատուցման	1950.0(տարեկան)
4.	Համայնքի բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցում	4500.0(տարեկան)
5.	Լուկաշին-Արմավիր ճանապարհի հիմնանորոգում	
6.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների գիշերային լուսավորության համակարգի անցկացում բոլոր փողոցներում	
7.	Ջրահեռացման համակարգի կառուցում(կոյուղի) հանրակացարանում	
8.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և ասֆալտապատում	
9.	Մշակույթի տան շենքի վերանորոգում և բակի կառուցում	
10.	Գերեզմանատան ցանկապատի կառուցում	
11.	Գյուղատնտեսության զարգացում	
12.	Լոդավազանի հիմնանորոգում	

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, համայնքի ավագանու կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- Հանրային աջակցությունը,
- Ազդեցությունը արտագաղթի կանխման վրա,
- Համայնքի կարողությունների հզորացում,
- Բնակչության սոցիալական պայմանների բարելավում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ համայնքի ավագանին որոշել է վերևում առաջարկված համայնքային ծրագրերի առաջնահերթությունները (աղյուսակ 4) :

Աղյուսակ 4. Համայնքային ծրագրերի առաջնահերթությունների որոշումը

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավ. արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշները (0-10 բալ)					Ծրագրի առաջնահերթությունը
			Հանրության աջակցությունը	Ազդեցությունը արտագաղթի կանխման վրա	Համայնքի կարողությունների հզորացում	Բնակչության սոցիալական պայմանների բարելավում	Ընդամենը (բալ)	
1.	Համայնքի աշխատակազմի պահպանում	19500.0 (տարեկան)	x	x	x	x	x	1
2.	Համայնքի մանկապարտեզի պահպանում	4400.0 (տարեկան)	x	x	x	x	x	2
3.	Աղբահանության ծառայության մատուցման	1950.0 (տարեկան)	x	x	x	x	x	3
4.	Համայնքի բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցում	4500.0 (տարեկան)	x	x	x	x	x	4
5.	Լուկաշին-Արմավիր ճանապարհի հիմնանորոգում		9	6	9	10	34	5
6.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների գիշերային լուսավորության համակարգի անցկացում բոլոր փողոցներում	5.0մլն	5	1	7	6	19	6
7.	Ջրահեռացման համակարգի կառուցում(կոյուղի) հանրակացարանում	15.0մլն	9	8	4	9	30	7
8.	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և	2.0մլն	8	7	4	8	27	8

	ասֆալտապատում							
9.	Մշակույթի տան շենքի վերանորոգում և բակի կառուցում		8	1	8	9	26	9
10.	Գերեզմանատան ցանկապատի կառուցում	10.0մլն	5	2	7	5	19	10
11.	Գյուղատնտեսության զարգացում		x	x	x	x	x	11
12.	Լողավազանի հիմնանորոգում		5	2	4	8	19	12

Ստորև ներկայացվում է համայնքի ավագանու վերլուծությունը և եզրակացությունը աղյուսակ 4-ում թվարկված բոլոր ծրագրերի իրականացման հնարավորությունների և ՀԶՀԾ-ում դրանց ձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ՝

- Համայնքի աշխատակազմի և մանկապարտեզի պահպանման ծրագրերը նախկին տարիներին մշտապես իրականացվել են և գալիք հինգ տարիներին ևս իրականացվելու են՝ առանց զգալի փոփոխությունների: Դրանք համարվում են համայնքի ամենաառաջնահերթ երկու ծրագրերը և ձևակերպվելու են համայնքի տարեկան բյուջեներում այդ հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվներով, այդ պատճառով ՀԶՀԾ-ում դրանց, որպես առանձին ծրագրերի, ձևակերպման անհրաժեշտություն չկա:
- Բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրին իրականացվում է համայնքի բնակչությանը սոցիալական ծառայությունների (սոցիալապես խոցելի ընտանիքներին միանվագ ֆինանսական օգնություն և հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն ) մատուցման համար: Այս ծրագիրը վերջին տարիներին միշտ կրկնվել է, համայնքի առաջնահերթ ծրագրերից մեկն է և ՀԶՀԾ-ում դրա առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:
- Աղբահանության ծառայության մատուցման պահպանություն, ծրագիրը համարվում է առաջնահերթ, յուրաքանչյուր տարի կրկնվող, նույն կերպ իրականացվող և ՀԶՀԾ-ում դրանց առանձին ձևակերպման անհրաժեշտությունը չկա:

Ստորև ներկայացվում են ՀԶՀԾ-ում ներառվող ոլորտային մնացած ծրագրերի առանձին ձևակերպումները՝ ըստ ծրագրի օրինակելի ձևի:

## Ծրագիր 7

Տնտեսական հարաբերություններ. Ջրահեռացում  
(Ոլորտի անվանումը)  
Ջրահեռացման համակարգի կառուցում (կոյուղի) հանրակացարանում

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 15,0 մլն. ՀՀ դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

€ Ծառայությունների մատուցում € Սպասարկում € Ընթացիկ աշխատանքներ € Գույքի ձեռքբերում € Վեանորոգում € վերականգնում € Ընդլայնում € Փոխարինում € Նորը € Այլ

Ծրագրի հիմնավորումը

Լուկաշին համայնքի կոյուղին կառուցվել է 1988թ-ին Լուկաշին համայնքի բազմաբնակարան շենքի (հանրակացարանի) կոյուղաջրերը հեռացնելու համար: Կոյուղագծի խողովակները փոքր տրամաչափի են, որը չի բավականացնում, որպեսզի սպասարկվի ամբողջովին: Կոյուղագիծը չի սպասարկվում ոչ մի կազմակերպության կողմից, խողովակները անհետևողականության արդյունքում, ժամանակի ընթացքում լցվել են սելավներից հեղեղված տիղմով և օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ) կազմում է 15-20%: Հաճախակի առաջանում են վթարներ, որը ստեղծում է հակահիգիենիկ իրավիճակ: Իսկ վթարները վերացնելու համար Լուկաշինի համայնքապետարանը միջոցներ չունի: Հաշվի առնելով վերը նշվածը՝ անհարժեշտ է կառուցել նոր ջրահեռացման համակարգ (կոյուղի), որը կսպասարկի ամբողջ հանրակացարանը:

Ծրագրի նպատակները

Բարելավել համայնքի հանրակացարանի բնակչությանը մատուցվող ծառայությունները և պայմանները, գերծ պահելով հակահիգիենիկ իրավիճակներից:

Ծրագրի խնդիրները

1. Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինասավորելու ծրագիրը:
2. Պատվիրել և նախապատրաստել ջրահեռացման համակարգի (կոյուղու) նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ծրագրի իրականացումը նախատեսել 2017-18թթ.

Ծրագրի ակնկալվող արդյունքները

- 2018թ. տարեվերջին համայնքի հանրակացարանում կգործի ջրահեռացման համակարգը (կոյուղու),
- Համայնքի հանրակացարանում զգալիորեն կբարելավվի բնակչությանը ջրահեռացման համակարգի ծառայությունների մատուցումը,

Կապը այլ ծրագրերի հետ

Ջրահեռացման համակարգի (կոյուղու) կառուցման ծրագիրն անմիջական կապի մեջ է հանրակացարանի տարածքում ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման և գիշերային լուսավորման համակարգի անցկացման ծրագրի հետ: Ջրահեռացման համակարգի կառուցումից հետո միայն հնարավոր կլինի կատարել ասֆալտապատման աշխատանքներ:

Ծրագրի բյուջեն

Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով:

## Ծրագիր 6

Տնտեսական հարաբերություններ. Ճանապարհային տնտեսություն  
(Ոլորտի անվանումը)

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների գիշերային լուսավորության համակարգի  
անցկացում բոլոր փողոցներում

(Ծրագրի անվանումը)

Լուկաշինի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 5,0 մլն. ՀՀ դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

€ Ծառայությունների մատուցում € Սպասարկում € Ընթացիկ աշխատանքներ  
€ Վեանորոգում € վերականգնում € Ընդլայնում € Փոխարինում € Լորը € Այլ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքի միայն գլխավոր փողոցներն են լուսավորված: Մնացած փողոցները հագեցած չեն գիշերային լուսավորության համակարգով, որը որոշակի վտանգ, անհարմարություններ ու դժվարություններ է առաջացնում հետիոտների և տրանսպորտային միջոցների համար: 2016թ. ընթացքում ներհամայնքային կենտրոնական փողոցները մասամբ վերազինվել են գիշերային լուսավորության համակարգով:

Փողոցների բարեկարգումից ասֆալտապատումից հետո անհրաժեշտ է դրանք վերազինել գիշերային լուսավորության համակարգով: Համայնքում տեղի են ունենում անասնագոդություններ, որին նպաստում է մուլթ ու չլուսավորված փողոցները:

Ծրագրի նպատակները

Բարձրացնել ներհամայնքային բոլոր փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը դարձնելով դրանք լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների և տրանսպորտային միջոցների համար:

Ծրագրի խնդիրները

1. Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 90% և 10% համամասնությամբ):
2. 2017թ. պատվիրել և պատրաստել ներհամայնքային թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 փողոցների, Գ. Նժդեհի փողոցի արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ նախատեսելով մետաղյա հենասյուններ 4.5 մ բարձրությամբ, 70 մմ տրամագծով, իրարից 40 մ հեռավորությամբ, յուրաքանչյուր հենասյան վրա՝ 1 լուսային սարքավորում և էլեկտրահաղորդալարեր՝ 10 մմ հաստատությամբ:
3. Համագործակցել և կնքել պայմանագիր «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ «Մուսալեռ» մասնաձյուղի հետ՝ տրամադրելու փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքներն իրականացնող մասնագիտական (տեխնիկական) խումբ:
4. Ձեռք բերել արտաքին լուսավորության համակարգի հենասյունները, լուսային սարքավորումները և էլեկտրահաղորդալարերը:

5. Իրականացնել վերոհիշյալ ներհամայնքային փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները և մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը այն հանձնել շահագործման :

Ծրագրի իրականացման ժամանակացույցը  
Ծրագիրը նախատեսվում է անցկացնել 2017թ.

Ծրագրի ակնկալվող արդյունքները

- 2017թ. ընթացքում ներհամայնքային փողոցներում կանցկացվի գիշերային լուսավորության համակարգ.
- փողոցները կդառնան լուսավոր, անվտանգ ու գեղեցիկ համայնքի բնակիչների ու տրանսպորտային միջոցների համար:

Կապը այլ ծրագրերի հետ

Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության համակարգի անցկացման ծրագրի իրականացումն անմիջապես կապի մեջ է գտնվում այդ փողոցների ասֆալտապատման և բարեկարգման ծրագրերի իրականացման հետ: Ներհամայնքային միայն պատշաճ մակարդակով բարեկարգումից հետո իմաստ կունենա դրանց արտաքին լուսավորության համակարգերի անցկացումը, հակառակ դեպքում ներհամայնքային փողոցները չեն ստանա ամբողջական գեղեցիկ ու գրավիչ տեսք:

Ծրագրի բյուջեն

Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինասական աջակցություն ստանալու հարցով:

## Ծրագիր 10

Տնտեսական հարաբերություններ. Գերեզմանատան ցանկապատում  
(Ոլորտի անվանումը)

ԳԵՐԵԶՄԱՆԱՍՏԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

(Ծրագրի անվանումը)

Լուկաշին համայնքի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 10.0 մլն. ՀՀ դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

€ Ծառայությունների մատուցում € Սպասարկում € Ընթացիկ աշխատանքներ  
€ Վեանորոգում € Վերականգնում € Ընդլայնում € Փոխարինում € Լորը € Այլ

Ծրագրի հիմնավորումը

Համայնքը ունի բաց գերեզմանատուն, որը ցանկապատված է եղել բարակ մետաղյա ցանցով, սակայն տարիների ընթացքում այդ ցանկապատը ոչնչացվել է:  
Ընտանի կենդանիները առանց արգելքի ներխուժում են գերեզմանատուն և վնաս հասցնում շիրիմներին, որը տեղիք է տալիս ազգաբնակչության դժգոհությանը: Անհրաժեշտ է կառուցել հիմնական բետոնե հիմքով և քարե պատով ցանկապատ:

Ծրագրի նպատակները

Անհնարին դարձնել ընտանի կենդանիների մուտքը գերեզմանատուն  
Ապահովել շիրիմների պահպանությունը և մաքրությունը

Ծրագրի խնդիրները

Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր  
Ձեռք բերել որևէ դոնոր կամակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ  
համատեղել համաֆինասավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 90 % և  
10% համամասնությամբ):

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ծրագրիրը նախատեսվում է անցկացնել 2019-2020թթ.

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Համայնքի գերեզմանատան պահպանություն և մաքրություն  
Շիրիմների պահպանություն

Ծրագրի բյուջեն

Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային  
կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով:

## Ծրագիր 11

Տնտեսական հարաբերություններ. Գյուղատնտեսության զարգացում  
(Ոլորտի անվանումը)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ  
(Ծրագրի անվանումը)

Լուկաշինի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 30000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

€ Ծառայությունների մատուցում € Սպասարկում € Ընթացիկ աշխատանքներ  
€ Վեանորոգում € Վերականգնում € Ընդլայնում € Փոխարինում € Լորը € Այլ

Ծրագրի հիմնավորումը

Լուկաշին համայնքում գյուղատնտեսությունը զարգացած չէ՝ վարելահողերը չմշակելու  
պատճառով վեր են ածվել անմշակ հողերի: Գյուղատնտեսությունը և անասնապահությունը  
համայնքում համարվում է ոչ եկամտաբեր: Համայնքապետարանը խորհրդային տարիներից  
հետո մինչ օրս չի ունեցել գյուղտեխնիկա, որ կարողանա աջակցի համայնքի բնակիչներին,  
մշակելու իրենց սեփական հողերը:

Համայնքային սեփականությամբ գյուղ տեխնիկայի ձեռքբերումը կօգնի գյուղացուն  
գյուղատնտեսության աշխատանքներում:

**Ծրագրի նպատակները**

Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը  
Համայնքում բարելավել հողի մշակության աշխատանքները  
Աջակցել գյուղացուն գյուղատնտեսական աշխատանքներում

**Ծրագրի խնդիրները**

Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ  
համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 90 % և  
10% համամասնությամբ):

**Ծրագրի իրականացման ժամանակացույցը**

Ծրագիրը նախատեսվում է անցկացնել 2020-2021թթ.

**Ծրագրի ակնկալվող արդյունքները**

Ծրագիրն իրականացնելուց հետո համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը  
Աշխատանքների ստեղծում  
Արտագաղթի նվազեցում  
Բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում

**Ծրագրի բյուջեն**

Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային  
կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով:

**Ծրագիր 8**

Տնտեսական հարաբերություններ. ճանապարհային տնտեսություն  
(Ոլորտի անվանումը)

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և ասֆալտապատում  
(Ծրագրի անվանումը)

Լուկաշինի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 2.0 մլն. ՀՀ դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

€ Ծառայությունների մատուցում € Սպասարկում € Ընթացիկ աշխատանքներ  
€ Վեանորոգում € Վերականգնում € Ընդլայնում € Փոխարինում € Նորը € Այլ

Ծրագրի հիմնավորումը

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է  
15կմ, որից ճանապարհի 2.0 կմ հատվածը յուրաքանչյուր տարի վերանորոգվում է  
համայնքապետարանի կողմից՝ կատարելով հիմնականում հողային, իճապատման և



ավագապատման աշխատանքներ: Մնացած մասը կազմում են ներհամայնքային փողոցները, որոնք նույալ կարիք ունեն լուրջ վերանորոգման ու բարեկարգման:

Համայնքի գույքահարկի բազայում հաշվառված են 268 մարդատար և 68 բեռնատար ավտոմեքենաներ , 1 մասնավոր ավտոբուս , որոնք մշտապես երթևեկում են ներհամայնքային անբարեկարգ փողոցներով, ժամանակի ընթացքում շարքից դուրս են գալիս և դառնում շահագործման համար ոչ պիտանի: Անբարեկարգ փողոցները ստեղծում են լրացուցիչ դժվարություններ ու անհարմարություններ նաև հետիոտների համար:

#### Ծրագրի նպատակները

Ներհամայնքային կենտրոնական փողոցները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

#### Ծրագրի խնդիրները

1. Ներհամայնքային կենտրոնական փողոցների 15 կմ հատվածի հողային, խճապատման և բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսել 2017-21թթ. ընթացքում:
2. Մինչև 2017-18թթ. յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը նախապատրաստել փողոցների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և վարձակալել մասնավոր բեռնատար ավտոմեքենաներ՝ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:
3. Մինչև 2018-2019թթ. յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը իրականացնել և ավարտել ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման աշխատանքները:
4. Մինչև 2019թ-ը ավարտել 15 կմ. ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգումը և ասֆալտապատումը:

#### Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ծրագրի ընթացքը նախատեսվում է անցկացնել 2017-2019թթ.

#### Ծրագրի ակնկալվող արդյունքները

- 2017-2019թթ. ընթացքում համայնքում կվերանորոգվեն ներհամայնքային կենտրոնական փողոցների 15 կմ երկարությամբ հատվածներ,
- Փողոցներում կվերանան ջրափոսերը, դրանք կդառնան անցանելի ու հարմարավետ ինչպես տրանսպորտային միջոցների, այնպես էլ հետիոտների երթևեկության համար՝ տարվա բոլոր եղանակներին:

#### Կապը այլ ծրագրերի հետ

Ներհամայնքային փողոցների վերանորոգման և բարեկարգման ծրագիրն անմիջական կապի մեջ արտաքին լուսավորման համակարգի անցկացման ծրագրի հետ: Ներհամայնքային փողոցների միայն բարեկարգումից հետո հնարավոր կլինի իրականացնել դրանց գիշերային լուսավորման համակարգի անցկացումը բոլոր փողոցներում:

#### Ծրագրի բյուջեն

Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով:

Համայնքի 2016-21թթ. ՀԶՄ-ում ներառված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ֆինանսական ամբողջական ապահովվածությունը և իրատեսականությունը մեծապես կախված կլինի համայնքի արդյունավետ համագործակցությունից պետության և դոնոր կազմակերպությունների հետ՝ ապահովելու վերջիններիս կողմից ակնկալվող ֆինանսական ներդրումները ՀԶՄ-ում ներառված համապատասխան ոլորտային ծրագրերում:

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Քանի որ համայնքը չունի իր տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր (գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ, քաղաքաշինական կադաստր, քաղաքաշինական կանոնադրություն և այլն), իսկ այդ փաստաթղթերի նախագծման (մշակման) պատվիրատուն, համաձայն <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, համայնքն է, հնգամյա ժամանակահատվածում նախատեսվում է համագործակցություն ծավալել Հայաստանում գործող նախագծային ինստիտուտների հետ՝ կազմելու համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների նախահաշիվը: Համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախահաշիվային արժեքը հաշվարկելուց հետո միջոցներ կձեռնարկվեն՝ հայթայթելու պահանջվող գումարը ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ), քանի որ համայնքի բյուջետային միջոցների ներկայիս սուղ վիճակն առայժմ թույլ չի տալիս կատարել նմանատիպ ծախսերը համայնքի բյուջեից:

Համայնքի համար անչափ կարևոր այս հարցի լուծման այլընտրանքային տարբերակ է դիտարկվում մոտ ապագայում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում խոշորացվող համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծումը, քննարկումը, հաստատումը և կիրառումը՝ խոշորացվող համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2016-21թթ. Ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, ջրային տարածքների, ինչպես նաև բնության շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, գերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,
- կանխարգելելու բնության և շրջակա միջավայրի աղտոտումը և վնասումը, ինչպես նաև սուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը համայնքում,
- սահմանել վերահսկողություն համայնքում գործող քարի վերամշակման արտադրամասերի, քարհանք շահագործողների գործունեության նկատմամբ՝ ուղղված բնության և շրջակա միջավայրի պահպանմանը,
- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման և ծաղկատնկման աշխատանքներ, ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

#### ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ

#### ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Չնայած ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում պարտադիր լիազորություններ համարյա թե չունեն, այնուամենայնիվ, համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջեային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2016-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքում խթանել անասնապահական, թռչնապահական և մեղվապահական մթերքների (մասնավորապես՝ կաթի, մսի, ձվի, մեղրի) արտադրության, հանձման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում կազմակերպել և աստիճանական զարգացնել տնային պայմաններում բնական հյութերի արտադրությունը և իրացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- աստիճանաբար բարեկարգել և ասֆալտապատել ներհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել գիշերային լուսավորության համակարգեր, տեղադրել

ճանապահային նշաններ՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,

- համայնքապետարանում տարեկան 2 անգամ կազմակերպել համայնքի գործարարների հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, ցուցահանդեսներ, փորձի փոխանակման և այլ միջոցառումներ:

#### ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՄԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2016-21թթ. Ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքային միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծականաշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2016-21թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,
- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,
- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում, գերեզմանատների գործունեության կազմակերպում և դրանց

պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,

- համայնքի հանգստի վայրերի, խաղահրապարակների, կանաչ տարածքների խնամքի և պահպանության կազմակերպում:

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի մշակում, հանրային քննարկում, համայնքի ավագանու կողմից քննարկում և հաստատում, գործողության մեջ դնում,
- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ,
- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ ֆոկլուս-խումբ քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,
- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,
- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում (մոբիլիզացիա)՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,
- համայնքի ՏԻՄ-երի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում:

## ԵԶՐԱՓՈՒՄ

Համաձայն տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրության, ՀԶՀԾ-ն հանդիսանում է համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը: ՀԶՀԾ-ում 2016-21թթ. համար նախատեսված ոլորտային ծրագրերը, համայնքային ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման և իրականացման համար: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը կհանգի հիմնականում (չհաշված ֆինասական այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը, ծառայությունները և միջոցառումները) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների մշակմանը և կատարմանը: Հետևաբար, համայնքի 2016-21թթ. ՀԶՀԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀԶՀԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-ին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի), ՀՀ-ում գործող միջազգային և տեղական դոնոր, մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, անհատ գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՀԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները:

ՀԶՀԾ-ում կամ տվյալ տարվա բյուջեում ներառված ծրագրերը կամ ծառայությունները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, նախատեսվում է, որ յուրաքանչյուր ծրագրի կամ ծառայության համար կսահմանվեն և կգնահատվեն դրանով նախատեսված աշխատանքների կատարման որոշակի ցուցանիշներ, որոնց միջոցով էլ մոնիթորինգի կենթարկվի և կգնահատվի տարեկան առաջընթացը ՀԶՀԾ-ով սահմանված՝ համայնքի միջնաժամկետ նպատակներին հասնելու գործում:

ՀԶՀԾ-ի կառավարման հանմանաժողովը տարին երկու անգամ կիրականացնի ՀԶՀԾ-ի տվյալ տարվա համայնքային ծրագրերի և ծառայությունների ներքին մշտադիտարկում (մոնիթորինգ), որի արդյունքները կներկայացվեն համայնքի ղեկավարին, վերջինիս կողմից էլ՝ համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի

ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

ՀԶԾ-ի իրականացման յուրաքանչյուր տարվա և հնգամյա ժամկետի ավարտին ՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից կկատարվի դրա տարեկան կամ հնգամյա գնահատում՝ ՀԶԾ-ում ներառված ծրագրերի, ծառայությունների և աշխատանքների կատարման ցուցանիշների սահմանման և գնահատման միջոցով:

ՀԶԾ-ի տարեկան կամ հնգամյա գնահատման արդյունքների հիման վրա ՀԶԾ կառավարման հանձնաժողովը կկազմի ՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը և կներկայացնի համայնքի ղեկավարին: Այդ հաշվետվության նպատակը կլինի՝ վեր հանել համայնքի առանցքային սոցիալ-տնտեսական զարգացումները մեկ կամ հինգ տարվա ընթացքում, բացահայտել բացթողումները, թերությունները և շեղումները հաստատված ՀԶԾ-ից:

Համայնքի ղեկավարը, մինչև ՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնելը, կկազմակերպի և կանցկացնի դրա աշխատանքային և հանրային բաց քննարկումներ 15-օրյա ժամկետում՝ այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը, համայնքում գործող պետական, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների կազմակերպություններին, շահագրգիռ այլ անձանց: Համայնքի ղեկավարը ՀԶԾ-ի իրականացման տարեկան տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը, դրա հանրային քննարկումների ժամանակ համայնքի հանրությունից ստացված և ընդունված դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ տեղեկանքը և կից այլ փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով, կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքի ավագանին ՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը կքննարկի օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով և կկայացնի համապատասխան որոշում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և/կամ համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները, օրենքով սահմանված կարգով, ներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը: